

ՍԵՒԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԴՈՒՌԸ

Ա.

Փայտագործական արուեստի ամենագեղեցիկ մնացորդներից մէկն է մեր մէջ Սեւանի Առաքելոց Վանքի հարաւային գուռը, որ այժմ պահւում է Երեւանի թանգարանում։ մեր մանր արուեստի այս հոյակապ մնացորդը առանձին արժէք է ստանում զիտութեան համար, որ իւր պատկերագրութեան եւ զարդարանդակների հետ ունի եւ ընդարձակ արձանագրութիւն թուականով եւ նորածագման մասնակից անձանց անունների լիշտակութեամբ։

Հնագոյն տեղեկութիւնը այս եւ նոյն վանքի արեւմտեան գրան ու նրանց արձանագրութիւնների մասին տալիս են Մանուէլ վարդապետ Կիւմիշխանեցի* եւ Շահիսաթունեան**, այնուհետև գրեթէ նոյնութեամբ կրկնում են իրարից արտագրելով Ալիշան***, Սմբատեան(0), Լուսյեան(00), վերջին երեքը

* Պատմ. Սեւանայ Վանուց. 1830, էջմ. եր. 43:

** Բ. եր. 213:

*** Սիսական, 84:

0 Գեղարքունի ծովագարդ գաւառ, Վաղարշ. 1895. 120:

00 Ազգ. Հանդ.

տալիս են եւ գրան պատկերը, նաեւ Կոստանեան(000) եւ Ե. Շահազիզ(v): Այս բոլոր բանասէրներն էլ ոչ միայն չեն տուել ուղղագրական եւ կցումների վերաբարագրութեամբ ճիշդ ընթերցում, այլ եւ թուականի սխալ վերծանութեամբ մեծ շփոթութիւն ստեղծել ըընապը հասկացողութեան համար։ Առաջին տողը, ուր թուականն է, բոլորն էլ անխափի կարգացել են. «ԶՀԱ. թուականի ԼԵ. թիւ աւելի», ուստի եւ Շահիսաթունեան շինութեան ժամանակը նշանակում է 1557, Ալիշան «յամի 1522 կամ 1557», Սմբատեան 1559 եւ Հայկական ՌԶ., Լուսյեան եւ Կոստանեան հետեւում են Շահիսաթունեանին կամ Ալիշանին, իսկ Ե. Շահազիզ ոչ միայն կրկնում է թուականի սխալ ընթերցումը, այլ եւ արձանագրութեան «Յաղուալ րէկ»ը նոյնացնում երեւանի նոյնանուն իսանի հետ, որ ապօռմ էր ԺԵ. զարու քառասնական թուականներին, մասնակից կաթողիկոսական աթոռի փոխագրութեան անցուգարձին։

Թուականի այս ընթերցանութեամբ

000 Վիմական տարեգիր, 178:

v. Հին Յերեւանը, 1931. 84:

արդա՛րեւ, ստեղծուում է հակասութիւնների եւ շփոթութիւնների այնպիսի մի բաւիլ, որ անկարելի է դարձնում պատմական ճիշդ գաղափար կազմել արձանագրութեան մէջ յիշուած անունների եւ դրան ծագման ժամանակի մասին։ Մէջ բերելիք աղբիւրներից կը տեսնենք, որ դրան սկզբնապատճառ Դանիէլի հնագոյն յիշատակութիւնն ունիսք արդէն 1452 թուին, իրբեւ գրիչ Տաթեւացու Մատթէոսի մեկնութեան, կատարելահասակ, մեղքի կատարեալ գիտակցութեամբ մի կրօնաւոր գորանից յետոյ, ուրեմն, նա ապրած պիտի լինի եւս 107 տարի պէտք է մեր կաթողիկոսների շարքում աւելցնել մի Սարդիս եւ մի Յաղուր բէկ իրբեւ Հայաստանի տէր ԺԶ. դարի երկրորդ կիսամեակի սկզբներում, եթէ ճիշդ համարենք այս ընթերցումը։

Ա՛րդ, ո՞րտեղից է ծագում այս սըխալը եւ դորա հետ կապուած շփոթութիւնը։ Կարճ պատասխաննենք. արձանագրութեան առաջին երեք տառերը՝ «ԶՀԱ» ամբողջապէս թուական ընդունելոց, որով ստացւում է 1006 (992+35) +551=1557։ Բայց ուշագիր ընթերցողը կարող է տեսնել, որ այդպիսի ընթերցումը ոչ միայն դէմ է հայ թուականների գործածութեան, ալ եւ անմիտ ճիշդ է ունինք հարիւրաւորների եւ տասնաւորների յաւելումներ, կամ հարիւրաւորների եւ տասնաւորների վերայ միաւորների յաւելումներ, բայց ոչ երբեք հարիւրաւորների, տասնաւորների եւ միաւորների հետ նոր տասնաւորների եւ միաւորների յաւելում։ Բայց այս ԶՀԱ գրերից թուական է միայն Զ, իսկ ՀՅ. կրամատումն է Հա(յոց) բառի, որով ամրողչը պիտի կարդալ. «Զ. Հա(յոց) թըւականի, ԼԵ. թիւ աւելի», այսինքն ԶԼԵ = 1486։ Այսպէս կարդալով՝ բոլոր

առեղծուածները լուծւում են եւ արձանագրութեան մէջ յիշուած անձնաւորութիւնները միանգամացան համապատասխան գալիս ժամանակին եւ յիշտակարանների տուած տեղեկութիւններին, ինչպէս կ'երեւայ հետեւեալ պըրակների մէջ։

Բայց այսպիսի քննութեան անցնելուց առաջ՝ ճշգենք արձանագրութեան բնագիրը, մատնանշելով մեր հնագոյն բանասէրների ընթերցումները. արձանագրութիւնը տողատում ենք ըստ յանգերի, իսկ Ա.Բ. Եւն. տառերով նշանակում բնագրի տողերը դրան կողքերի համեմատ. մեր ընթերցուածի մէջ ընդգծուած տառերը կցուած են իրար (փակագիր), նրանց ձեւերը պէտք է տեսնել նկարի մէջ (պատկ. 1)։


- Ա. 1. Զ. Հա թվկանի
- 2. ԼԵ. թիւ աւելի:
- 3. Յաթոկալթե տն Սարգսի
- 4. Ի իսանութե Յաղուար բկի
- 5. Ծաղկեցաւ գուռն տաճարիս
- 6. առաքելոցն Քի
- 7. Հրամ ան աւս վդի

յանօր. 1. ՄՎ. ԶՀԱ. քուականին. ՇԽ. ԱԼՀ. ՍՄԲ. ԿՈՍՏ. ՇԽԳ. ԶՀԱ. քրւականին.

2. ՄՎ. երեսուն եւ հինգ թիւ աւելի: ՇԽ. ԱԼՀ. ՍՄԲ. ԿՈՍՏ. ԼԵ. թիւ. ՇԽԳ. երեսուն եւ հինգ։

3. ՄՎ. յաթոռակալութեան տեսոն Սարգսի. ՇԽ., ԱԼՀ., ՍՄԲ., նոյն: Կոստանեան տն, որ ուղղել է իրովի եւ ոչ թէ բնագրի վերայ այդպէս կարդալով։ ՇԽԳ. Սարգիսի։

4. ՄՎ. Աղուալ պեկին, ՇԽ. Յաղուր բեկի. ԱԼՀ. Յեղուր բեկի, ՍՄԲ. Յաղուր բեկի. Կոստ. Յաղուր բեկի. ՇԽԳ. Աղուալ պեկի։



Պատկեր թիւ 1

- Բ. 8. Եռամեծիս Դանիէլի
9. Եւ սիրելի որդոյ սորին
10. Եպիս տը Ներսեսի
Կ. 11. Ճեռամբ սորին աշա-
կրտի
12. անարժանիս Արքահամի
13. նայ եւ եղբաւը մեր սի-
րելի
14. չնորհաւք իլի Գրգիսի
15. յ(?)ոտս անկիմ ամի
16. հայցել տէ պարզեւ ձրի
17. բարունապտիս համայն
ազգի
18. Եւ ծնողացն իւրոց բարի

5. Մվ. Շաղկեցաւ դուռն տաճա-
ռի, Շխ. Ալշ. Սմբ. Կոստ. տաճարիս,
Շհզ. տաճարի:

6. Մվ. Առաքելոցն Քրիստոսի,
նոյն եւ միւսները:

7. Մվ. հրամանաւ սուրբ վարդա-
պետի, նոյն Ալշ. եւ Շհզ. վերջինս
«սուրբ»ը կրթատ, «ս»: Շխ., Սմբ. եւ
Կոստ. չունին «սուրբ», բայց «ս» տառը
կայ բնագրի մէջ, միայն իբրեւ մաս
«հրամանաւ» բառի, ինչպէս մենին ենի
կարդում:

Ծանօթ. 8. Սմբ. եւ Շհզ. Դանիէ-
լի:

9. Բոլորն էլ՝ «որդւոյ»

10. Մվ. եպս. Տէր Ներ-
սեսին. Շխ. եպսիս Տէր Ներսէսի. Ալշ.
եւ Կոստ. նոյն Շխ.ի հետ: Միայն Կոստ.
ունի «տր»: Սմբ. եւ Շհզ. եպիսկոպոս
տէր Ներսէսի.

11. Ամենին էլ «աշակեր-
տի»:

12. Ամենին էլ «անարժա-
նիս Արքահամի», այսինքն առանց կրց-
ուածքների, իսկ Շհզ. անարժանի:

13. Ամենին էլ «նաև»,
իսկ Շհզ. նաև: Մվ. եղբօր, Սմբ. եղ-

19. Կողո քհի եւ մարն Հա-
մօրի.*

Համեմատութիւնը ցոյց է տալիս,
որ Ալիշան հետեւում է Շահիսաթունեա-
նի, բայց, գուցէ, ունեցել է եւ մասնա-
ւոր աղքիւր. Սմբատեան Շահիսաթուն-
եանին, թէ եւ ինքն էլ տեսել է դուռը, ո-
րով եւ բացատրում են փոքրիկ տարրե-
րութիւնները. Լալայեան օգտուում է Ա-
լիշանից. Կոստանեան յայտնում է, որ

բայր, Շհզ. եղբօր:

14. Մվ. Շհզ. շնորհօֆ:
Մվ., Շհզ. Գրիգորի, Շխ. Գրգսի: Ալշ.
Սմբ. Կոստ. Գրիգորիսի:

15. Յ-ի առաջ հարցական
ենի դրել, որովհետեւ տառը չկայ ար-
ձանագրութեան մէջ, այլ մի փոքրիկ
նշանախնց միայն վերեւում, որով, գու-
ցէ, փորագրիչը կամեցել է իւր մոռա-
ցած տառը մատնանշել. հաստատ չի
կարելի պնդել: Մվ. Ալշ. Սմբ. Շհզ.
յոտս, Շխ. Կոստ. ոտս: Մվ. Ալշ. Շհզ.
անկանիմ ամենայնի, Շխ. Կոստ. ան-
կանի յամի, Սմբ. անկանի ամենայնի:
Բնագրի մէջ այնպէս է, ինչպէս մենին
ենի տալիս, այսինքն «անկիմ ամի»,
բայց առաջին բառի մ-ը այնպէս է գրր-
ուած, որ սխալմամբ կարելի էր շեղագիր
յ կարդալ, այդտեղից էլ Շխ-ի եւ նրան
հետեւող Կոստ-ի սխալը:

16. Մվ. Շհզ. հայցել
տեանն, Շխ. հայցել տեաննէ. Ալշ.
հայցեալ տեաննէ, Սմբ. Կոստ. հայցել
ի տեաննէ: Բնագրի մէջ Յ-ի պոչը այն-
պէս է կպած լ-ին, որ սխալմամբ կարե-
լի էր կցուած լի կարդալ, դորանով է
բացատրելի «ի տեաննէ» ընթերցումը:
Ամենինը, պարզէ, Շհզ. պարզեւ:

18. Ամենին, «և», միայն
Սմբ. «եւ»: Կոստ. ի(ւ)րոց, բնագրի
մէջ ւ-ի նշանով, ուրեմն կցուած է:

իւր աղբիւրը Շահխաթունեանն է. Շահազիդ հետեւել է Մանուէլ վարդապետին, իսկ փոքրիկ տարբերութիւնը, որ կայ երկուսի մէջ, գուցէ, ինքն է կարդացել այդպէս ընապրի վերայ*:

Բ.

Այժմ աշխատենք որոշել արձանագրութեան մէջ յիշուած պատմական անունների՝ Սարգիս կաթողիկոսի եւ Յաղուպ բէկի՝ անձնաւորութիւններն ու ժամանակը եւ տեսնենք նրանք համապատասխան ե՞ն մեր ընթերցման թը—

Մանօր. 19. Մվ. Կարապետ քահանային եւ մօրն Համաւորի: Շխ. Կրպտ քահանայի եւ մաւրն...: Զի կարդացել մօր անունը, նոյնը եւ Կոստանեան: Ալշ. Կարապետ քահանայի եւ մօրն (իւրոյ) Համաւորի: Սմբ. Կարապետ քահանայի եւ մաւրն Համասփիւռի Շիզ. Կարապետ քահանայի եւ մօրն Համաւորի:

* Այս փաստը ապացոյց պիտի լինի թէ ինչքան զգուշութիւն է հարկաւոր, առ հասարակ, առանց նմանահանութիւնների արձանագրութիւններից օգտուելիս: Երախտապարտ ենք Շահխարունեանի, Զալալեանի եւ ուրիշների կատարած գործի համար, բայց հայագիտութեան ամենակարեւոր եւ անհրաժեշտ կատարելիքներից մէկը պիտի համարել արձանագրութիւնների նոր, ամբողջական եւ նմանահանութեամբ բնիսական հրատարակութիւնը:

** Զամշ. Գ. 506-7:

*** Զեռ. Երեւանի քանգ. №134) 129 իւ Զեռ. Էջմ. №1312 նժ. տ. մեր «Խաղակեանի» 234:

iv. Զեռ. Էջմ. №2664 տ. եւ մեր «Խաղակեանի» եր. 232:

v. Այրարատ. 230:

vv. Ազգապատում 2180:

ւականին, թէ ոչ:

Գրիգոր Մակուեցու (1465) անմի-թական յաջորդն էր նորս աթոռակալ Սորբիստակէս Բ., որին Զամշեան սիսալմամբ չորս տարի միայն ինքնազլուխ կաթողիկոսութիւն է տալիս՝ 1462-1465, յաջորդ նշանակելով Սարգիս երկրորդին եւ սա Յովհաննէսին**: Արիստակէսի մահուան եւ Սարգսի յաջորդութեան ժամանակի եւ տեսողութեան նկատմամբ սիսալում են նաև Զամբինեան եւ Օրմանեան. առաջինը նշանակում է Սարգսի կաթողիկոսութիւնը՝ 1468-1470, իսկ երկրորդը՝ 1470-1474: Բայց մենք հաստատ գիտենք, որ Զի և Զիթ*** թուականներին կենդանի էր դեռ Արիստակէսը, եւ միայն Զիդ թուականին առաջին կաթողիկոս է յիշուած Սարգիս երկրորդը IV. : Մեր հին հեղինակներից էլ Դաւրիթեցին Սարգսի կաթողիկոսութիւնը նշանակում է Զիդ, իսկ «Զամբո»ի հեղինակը՝ Զիդ, եւ հաւա-նօրէն Գ եւ Դ տառերի շփոթութիւնից է ծագել այս տարբերութիւնը. Իտալիայի Գենուա քաղաքի գիւանից հանուած տեղեկութիւնը՝ մի մեռած կաթողիկոսի մասին 1474 թուին՝ ճիշդ Արիստակէսին պիտի վերապրել, ինչպէս եւ կարծել է Ալիշան(v) եւ ոչ Սարգսին, ինչպէս Օրմանեան(vv): Բայց այսմ իրբեւ վերջնականապէս պարզուած, Արիստակէսի մահը պիտի նշանակել 1474ին եւ Սարգսի առաջին տարին 1475ին:

Բայց սորանով չէ վերջանում Սարգսի անուան հետ կապուած շփոթութիւնը. Ալիշան սրան յաջորդ է նշանակում Յովհաննէսին 1475-1476 եւ ապա Սարգիս Գ. 1477-507. Զամբինեան Յով-հաննէսի համար 1476-1477 եւ Սարգիս Գ.ի՝ 1477-1506. իսկ Օրմանեան Սարգիս Գ.ի համար Յովհաննէսին աթոռակից է նշանակում 1476ին եւ ապա 1484-

1515 իրրեւ ինքնազլուխ0: Այս երեքի համար էլ այս ժամանակում Սարգիս Գ.ի զոյութեան հիմք է ծառայել Դաւ- րիթեցին, զոնէ Ալիշանը հաստատ յի- շում է իւր աղբիւրը, առանց պատճա- ռարանելու, իսկ Օրմանեան փորձում է յուսարանել Դաւրիթեցու խօսքերը եւ դորա վերայ հաստատել իւր պնդու- մը:

Մէջ ենք բերում Դաւրիթեցու այդ հաստածը00.

«Թուական ԶժԵ: Նոյն տր. Գրիգոր եւ նոյն տր. Արիստակէս:

«Այլ եւ եղեւ կթղկս. տր. Սարգիս:

«Թուական ԶիԳ: Նոյն տէր Սարգիս, այլ եւ եղեւ կթղկս. տէր Յօհաննէս:

«Թուական ԶիԵ: Նոյն տէր Յօհաննէս. այլ եւ եղեւ կթղկս. միւս այլ տէր Սարգիս»:

Օրմանեանը բնդգծուած բառերի հիման վրայ պարզ է համարում այստեղ յիշուած երկու Սարգիսների զանազա- նութիւնը, մէկը որպէս Յօհաննէսի նա- խորդ, մէիւսը յաջորդ: Արգա՛րեւ, մի- այն այս հաստածով ուրիշ կերպ էլ հասկանալ կարելի չէր, բայց Լուսաւոր- չի աջի Աղթամարից գողանալու նախըն- թաց պատճութեան մէջ ժամանակակից կաթողիկոսների յիշատակութիւնը բո- լորովին հակառակն է հաստատում. Վրթանէս եպիսկոպոսը Աղթամար է գնացել «խորհրդով եւ կամօք կթղկո- սացն իջմիածնի, որոց անուանքն էին Սարգիս եւ Յօհաննէս». աջի ազատու- թիւնից յետոյ՝ Զուզայից «առաքեցին աւետաւորս ի սր. աթոռն իջմիածին առ կթղկոսն Սարգիս եւ Յօհաննէս», որոնք եւ եախիջեւան են գալիս ընդառաջ*: Այս վիշտութիւնների մէջ առաջին կաթողի- կոոր միշտ Սարգիսն է յիշուած և երկ-

րորդը միայն Յօհաննէս. վերեւ մէջ բերուած ժամանակագրական հատուա- ծի մէջ էլ «միւս այլ տէր Սարգիս» խօս- քերով ուրիշ Սարգիս չունի Դաւրիթե- ցին իւր մտքում, բայց եթէ աջի պատ- ճութեան մէջ Յօհաննէսից առաջ յիշ- ուած Սարգիսը, որի հաստատութեան անհերքելի ապացոյցն է եւ այստեղ կրկնութիւնը, թէ «այս Յօհաննէս եւ Սարգիս կթղկսաց ժամանակին» է կա- տարուել աջի ազատութիւնը:

Աւելացնենք, որ ժամանակագրու- թիւնների համաձայն աջի ազատութեան տարին ԶիԶ թուականն է**, իսկ Դաւ- րիթեցին Վրթանէսի դեգերումը Աղթա- մարում Եօթ տարի է նշանակում, ու- րեմն եւ ազատելու խորհուրդն ու որո- շումը 1469-70 թուին, երբ իսկական կաթողիկոսը Արիստակէսն է եւ փոխա- նորդը Սարգիս երկրորդ: Եթէ եօթ տարուայ տեւողութիւնը չափազանցու- թիւն չէ, որ չառ հաւանական է, Վր- թանէսի լուսոյ պսակն աւելի պայծա- ռացնելու համար, նշանակում է Յով- հաննէսի մասնակցութիւնը նաեւ զողա- նալու խորհրդի մէջ՝ յետսագոյն մտա- ծողութիւն է հեղինակի կողմից. ազա- տութեան ժամանակակից համարելով, կարծում է մասնակից նաեւ առաջին խորհրդակցութեան հակառակ դէպքում պէտք է կարծել, որ աջի ազատութեան միաբը յզացուած է Սարգսի կաթողի- կոսութեան առաջին տարին իւր Յօհանն- էս աթոռակցի մասնակցութեամբ, ու- րեմն եւ Վրթանէսի ծպտեալ աշխատան- քը Աղթամարում պէտք է մօտաւորա- պէս երեք տարի տեւած լինի: Ինչպէս էլ յինի, Դաւրիթեցին աջի ազատութեան ժամանակակից Սարգսի մասին մտա-

Օ. Անդ. 2208:

00 Ամստերդամ. 1669. եր. 422:

* Դաւրիթեցի. Ամստ. 412.415:

** Զամշ. Գ. 507

ծում է որպէս Յովհաննէսից նախաթռոռ եւ նոյն՝ խորհրդակցութեան Սարգսի հետ, թէ եւ ժամանակագրական հատուածի մէջ Յովհաննէսից յետոյ եւս յիշել է. «միւս այլ» խօսքերով ոչ թէ ուղում մի այլ Սարգիս հասկանալ, այլ թէ Յովհաննէսի ժամանակ կաթողիկոս էր մի ուրիշն էլ, տէր Սարգիսը: Օրմանեանի կարծիքը, թէ խորհրդակցութեան մասնակից Սարգիսը ուրիշ էր եւ ազատութեան մասնակիցն ուրիշ, չի արդարանում ոչ մի աղբիւրով*:

Այսպիսի հասկացողութեան եւ բացատրութեան համապատասխան են եւ մեր բոլոր աղբիւրները. Զամշեան Զի՞Դ եւ ԶԼԱ. թուի յիշատակարան է տեսել «ի հայրապետութեան տն». Սարգսի եւ յեպիսկոպոսութեան տն. Յովհաննիսի**: Նորանից անկախ մենք էլ տեսանք, որ Սարգսի կաթողիկոսութեան առաջին տարին Զի՞Դ էր, երեւի այդ տարին էլ Յովհաննէսին աթոռակալ պիտի նշանակած լինի եւ երկուսով հետամտած աջի ազատութեան. Յովհաննէսի աւելի վաղ աթոռակցութեան մասին մինչեւ այժմ ոչ մի աղբիւր յայտնի չէ, եւ առհասարակ նորա անունը չենք տեսնում յիշատակարանների մէջ բացի Առաքելի, Զամշեանի եւ Ալիշանի(v) մէջ բերումներից, Զի՞Դ (Զի՞Դ) – Զի՞Զ թրականներին, մինչդեռ Սարգսի անուան հետեւիլ կարող ենք բազմաթիւ աղբիւրների մէջ կաթողիկոսութեան առաջին տարուանից սկսած եւ մի քանի տարի իրար յետեւից անընդհատ. Յովհաննէսը, հաւանօրէն, աջի ազատութիւնից յետոյ ուղեւորուել է Լեհաստան, որի ներկայութիւնը 1485 թուին կամենից քաղաքում վկայում է Ստեփանոս Ռուշ-

քեան*, և երբեք չէ եղել նախաթռոռ կաթողիկոս:

Տարաբախտաբար այստեղ ձեռքի տակ չունինք մեր հաւաքած Յիշատակարանների հարուստ ժողովածուն, ուստի եւ լրիւ չափով չենք կարող բերել Սարգսի, նորա հետ եւ Յաղուր բէկի անունների յիշատակութիւնները, որչափ մեզ մատչելի են զարձած, բայց ինչ որ յիշել կարող ենք, բաւարար է հաստատելու թէ Սեւանի դրան արձանագրութեան Սարգիս կաթողիկոսը նոյնանուն երկրորդն է, իսկ Յաղուր բէկը Ագգոյունի Ամիղի իշխան, Աւթմանայ թոռն եւ Հասան բէկի որդին, որ իւր հօր մահաւանից յետոյ՝ 1478ին սպանեց իւր աւագ եղբայր Խալիլին, եւ ժառանգեց իշխանութիւնը, տէր դառնալով Պարսկաստանի հետ եւ Հայաստանին. սա էլ իւր հերթին զեղակուր եղաւ իւր քրոջ ամուսին Արդարիլի իշխան չէյի Հէյդարի կողմից 1491 թուին: Ապա ուրեմն այս Յաղուր բէկը բոլորովին տարբեր է Աթոռի փոխազրութեան ժամանակակից նոյնանուն անձից, որ Գարագոյունի իշխանների կողմից Երեւանի կուսակալ էր նշանակուած, եւ որոնց տէրութիւնը կործանուած էր արդէն Յաղուրի հօր Հասանի ձեռքով:

Այժմ անցնենք փաստերի յիշատակութեան: Արխտակէս Բ. մեռած տեսանք Զի՞Դ (= 1474) թուին եւ Սարգիս Բ. Զի՞Դ (= 1475) իրեւ «ընթանուր Հայոց աղզի» կաթողիկոս:

Նոյն թուին Պոոչեանների Սպիտակաւոր Աստուածածնի վանահայր Դարիթ գրել է մի աւետարան «ի յաթոռակալութեան Վաղարշապատու ար. Սարգիս կթղկոսի**:

* Ազգապատում. 2179:

* Անդ. 230:

** Հատոր Գ. 506-7:

** Մեր «Խաղբակեանի» 234. Զեռ. Էջմ. №1312 նժ.

v. Այրարատ. 230:

Զաքարիա եւ Աբրահամ եղբայրները նոյն վանքում Զիե (= 1476) թուին, «ի զանութե. Պայտանդուր Հասան բէկին, ի կաթողիկոսութե. ան. Սարգսի» նորոգել են մի ձաշոց*:

Մի ուրիշ Զաքարիա զրիչ զրել է մի աւետարան «ի թվին Հայոց: Զ. եւ ի Զ: ամի, ի ձորս Աշոտո եւ ի վանս յԱնկիւնեաց: . . . ի թագաւորութեան Հասան Պարտի, որ առ ու գերի արաւ զաշխարհն Տփիսիս. Կի. մարդ, Լի. ի սուրն անցուցին: Լի. զերի: . . . ի հայրապետութե. ար. Սարգսի»**:

Վերեւի Դաւիթ զրիչը Զիե (1478) թուին իւր զրած ձառընտիրը թուագըրում է «ի զանութե. Յայզուր պէկին որդոյ Հասան պէկին, թուինն Աւթմանայ, զոր (sic) յայսմ ամի էսպան զեղրայրն իւր զուլտան Խալիլն եւ էտ ըզսուլթանութիւն: Եւ ի յաթոռակալութեն Վաղարշապատու ար. Սարգսի կթղի. »⁰:

Ուշադրութեան արժանի է, որ չորս տարի իրար յետեւից եւ երկու անգամ միեւնոյն զրչի կողմից ունինք Սարգսի անուան յիշատակութիւն առանց որ եւ է ակնարկի, թէ նոցանից մէկն ու մէկը տարրեր անձն է:

Վերեւ յիշուած Աբրահամ զրիչը, որ միեւնոյն ժամանակ նկարիչ էր, գըրել է եւ ծաղկել մի աւետարան 1482 թււին «Յաղուազ բեակի» և Սարգիս կաթուղիկոսի ժամանակ (00) դարձեալ առանց յիշելու, որ այս Սարգիսը տարրեր է Զիե թուին իւր յիշած նոյնանուն կա-

* «Խաղակեանի» 236: Զեռ. Էջմ. №479, 278, 278ա:

**Աբրահամ. 1911. 219:

0. Մեր «Խաղակեանի» 235: Զեռ. Էջմ. №909, 942, 488թ:

00 Զեռ. Երեւանի թանգ. №1091 եւ Զամշ. Գ. 506-7:

թուղիկոսից: Նոյն թուականին Զամշ. չեանն էլ տեսել է մի յիշատակարան Սարգսի եւ Յովհաննէսի անունների յիշատակութեամբ (00):

Ալէքսիանոս եղակոպոսը Աբքայի վանքում Եաղուր բէկի թագաւորութեան եւ տէր Շմաւոնի կաթողիկոսութեան ժամանակ Զիե կամ է (= 1486 կամ 1488) թուին զրել է մի մեծադիր աւետարան*:

Եղիս զրչի կողմից Զիե (= 1490) թուին զրուած է մի աւետարան ի հայրապետութեան առ. Սարգսի**:

Կեչառուաց վանքի Գալուստ արեգան Զիե (= 1491) թուին, «ի բոնակալութեան աշխարհիս Հայոց եւ Պարսից Եաղուր բէկի եւ ի հայրապետութեան տեառն Սարգիս կաթուղիկոսի Հայոց եւ պատրիարք Վաղարշապատու . . .», զրել է մի աւետարան***:

Զենք ուզում այլ եւս շարունակել մեր տեղեկութիւնները Սարգսի մասին, քանի որ մտադիր ենք մի անգամ եւս դառնալ նրա կաթողիկոսութեան ամրող ժամանակի պարզաբանութեան, երբ հնարաւորութիւն կ'ունենանք լիովին օդապործել մեզ մատչելի եղած բոլոր նիւթերը. այստեղ հարկաւոր էր միայն բացատրել, թէ ո՞վքեր են արձանագրութեան մէջ յիշուած Սարգիս կաթուղիկոսն ու Յաղուր բէկը:

* Սմբատեան. Գեղարքունի. 52: Այստեղ Նախիջեանում, ուր Վերջնական կերպարանիք է ստանում յօդուածը, ոնարաւորութիւն չունինք որոշելու կաթուղիկոսի անձնաւորութիւնն ու վաճեցի տեղը. հաւանօրէն Շմաւոնը Ադուանից կաթուղիկոս պիտի լինի:

** Անդ. եր. 397:

*** Անդ. եր. 48:

Այսպիսի լուսաբանութիւնից յետոյ այլ եւս անկասկած պիտի համարել թը- ւականի մեր ընթերցումը, որ համապա- տասխան է վերեւ մէջ բերուած պատմա- կան հանդամանքներին:

Մեւանի հարաւային գուռը շինուած է ԶԼԵ թուականին:

Գ.

Ո՞վ է Դանիէլ վարդապետը, որի հրամանով շինուած է զուռը: Բարերադ- դարար այստեղ էլ յիշատակարանները օգնում են պարզելու ոչ միայն նորա, այլ եւ Արքահամ նկարչի եւ միւսների անձ- նաւորութիւններն ու յարաբերութիւն- ները, ամենքն էլ ժե: դարու երկրորդ կիսում, որով կրկին հաստատում է դրան շինութեան ճիշդ ժամանակը, թը- ւականի մեր ընթերցման համեմատ:

Դանիէլի մասին, յիշեցինք արդէն, որ հնագոյն տեղեկութիւնն ստանում ենք 1452 թուին, երբ նա իւր ձեռքով գրել է Տաթեւացու «Մատթէոսի մեկ- նութիւն»ը, տալով նաեւ մի քանի մեծ ու փոքր յիշատակարաններ իւր եւ իւ- բայինների մասին տեղեկութիւններով (7թ. 148թ. 230ա. 233ա. 281թ-282ա):

Նա իրեն անուանում է «տառա- պեալ եւ եղկելի ոգի, անուամբ մի- այն ար. եւ ոչ զործով», «վիրաւոր- եալ մեղօք Դանիէլ ար.»: Ամենից ըն- դարձակն ու կարեւորը վերջին յիշատա- կարանն է, որից բառացի մի հատուած մէջ ենք բերում նրա անձն ու պատրաս- տութիւնը բնորոշելու համար, մի տե- սակ ընծայական իւր մատենի. «Ամենե- ցոյն (!) ակն նայի ի քեզ, ար., իմա- ցականք եւ իմացաւլք, որպէս ի անունդ եւ ի հաստումն. եւ երեք կարգաւք ապ- րին, որդիայկանաւ կամ վարձատրուր. կամ ծառայականաւ: Եւ աստուստ հե- ռացեալքն եւ ընդ մահու սահմանաւ, յո- րոց է աղքատ ողի Դանիէլ, ակնկալու ո-

դորմուե. քո եւ քոոցն: Որ ի ձեռնտւու- թենէ բարերար կամաց քոց, հնարեալ եւ վստահացեալ ընծայարեր լինել քեզ ի քոոցն, զայս կտակ մատենի բռնելիք! շնորհաց քոց, նուէր յեկղցի քո սր- ի յաւգուտ կարգաց որ անդ: Եւ ի ձեռն նոցա ի քէն գիւտ շնորհաց տառապելոյ քո Դանիէլիս: Արդ, ընդ իս առեալ ըզ- դութ քո եւ զարժանաւորս քո, հայցեմք ի քէն, ամէնողորմն ած., երեքերեւեան նւ միեղէն տրութի. եւ ածութի., հայր եւ բան եւ հոգի սր., արմատ անմահուե. և տուն (կ) կենարը և պառուղ լուսաբաշխ, կենարար մեռելոյս, լոյս խաւարելոյս, թժիշկ հիւանդիս, եւ ըստ ողորմութեն. քում հայր որրոյս, ընկալ զսայ ի ձեռաց իմոց աղերս յեկեղեցի քո ի փառս ան- ուան քում մեծի, ի պայծառութի. կա- թողիկէի, ի փրկութի. հոգոց մանկանց նորա, ի նշան յիշատակի չքաւոր ոգոյ իմոյ: Եւ արձանացոյ զսայ եւ արդիւնա- ցոյ մինչ ի կատարումն շարժայկանացս աւըստաւրէ ողորմութի. գտանել ի ձեռն նոցայ, որք պաշտեն սովաւ առջի քո յաւիտեան»:

Ապա նա տալիս է տեղեկութիւններ մատեանի բովանդակութեան, գրչու- թեան տեղի եւ ժամանակի մասին. «Արդ գրեցաւ սր. աւետարանի քաղ- ուածոյս Մատթէոս գլխին յերկիրս Գե- ղամայ, ի Սեվան կղզի, ընդ հովանեաւ սր. Ածածնիս. եւ սր. Առաքելոցս, սր. Կրպիս. եւ սր. Լուսուրչիս, սր. նշա- նացս եւ սր. Վրդցս շիմաց» ... ի կա- թողիկոսութեն. տր. Գրդրի., առաջ- նորդ մեծի սր. աթոռոյ կջմիածնի, ի խանութեն. Զահանշահի, որդոյ Ռւսու- փի, ի թվկնւե. հայոց: Զ: » ի վերջոյ յի- շել է խնդրում «Պհայրն իմ զկրպ. քնյ. եւ զմայրն իմ Համաւոր, եւ զեղրարքն զԳրգրէս քհնյ, Վրդնս, Ռատակէս եւ զքեռն իմ Սատղ., եւ զհզյեղբարսն իմ

զԾիրասուուր արեղյ, եւ զներսէս, բաղմերախտ իմ զՅովհաննէս կրօնաւոր...: Այլ եւ զԱլէքսիանոս արդյ, որ զօրինակն շնորհեաց»:*

Դանիէլի մասին երկրորդ տեղեկութիւնն ունինք 1464 թուին՝ նորա համար դրուած տօնականից, որ մինչեւ վերջերս էլ պահուած էր Սեւանում եւ մի քանի տարի առաջ միայն բերուած է էջմիածին**, բաղկացած էր 952 թերթից, որի առաջին տաս թերթն այժմ ընկած է: Գրուած սիրուն բոլորգով, երկսիւն, բամբակի թղթի վերայ, սկսուածքի եւ լուսանցքի զարդերով, կենդանիներով, երբեմն նաև թեւաւոր, եղջերու. թըռչուն, երբեմն կտցին օձ բռնած. պարիկ, մարդկային պատկերներ՝ կիսանդրի եւ ամբողջական: Գրիչն ու նկարիչն է Հաւուց թառի վանական Ստեփանոս, որ գրել է սկզբում իւր համար (ներքեւի լուս. 202թ - 203ա. 222թ - 223ա)***, իսկ յետոյ 273ա-ից սկսած յիշատակարանների մէջ ստացողը Դանիէլ վարդապետն է: Երկու յիշատակարանի մէջ, 139ա եւ 937ա՝ ձեռագրի վերջում մանրամասնութիւններ ենք իմանում Դանիէլ վարդապետի ծնողների եւ մերձաւորների մասին. առաջնի մէջ, որ գրչից տարբեր ձեռք է, յիշուած են հայրը կարապետ քահանայ, մայրը Համաւոր, եղրայրները Ռստակէս, Վրդանէս,

* Զեռ. Էջմ. №1319)1301, թուղթ, միջակ գեղեցկութեամբ բոլորգիր: Մատքեոսի մեկնութիւնից զատ մի բանի բարոզներ վերջում: ** Էջմ. №3759:

*** «Եւ զմեղապարտ Զոտացաւդ սր. զրոց Զստեփաննոս եւ զծնողս մեր յիշեցէք, որ եւ խիստ տառապանաւէ եւ տկար անձամբ զրեցի ի դառն եւ ի նուրբ ժամանակի ի մէջ այլազգեաց՝ եղուկ, եղուկ մեզ»:

Գրիդորիս քահանայ. Յուսիկ, Ներսէս, Մահակ, Յակոբ, Մելիքոսն, Ասանէթ եւ Մինախաթուն. Հօրեղբայրները՝ Ամբրիւթ եւ Կուլիաթ եւ սրանց հայրը Ասպանդիար: Վերջին յիշատակարանի մէջ հօր եւ մօր հետ կրկնուած են եղրայրներից Ռստակէս, Վրդանէս, Յուսիկ, Գրիգորէս, Մահակ եւ Դանիէլ. յիշուած է եւ տէր Ներսէս արեղայ, որ քիչ յետոյ մէջ բերուելիք 1471 թուի մի ուրիշ յիշատակարանի մէջ արդէն եպիսկոպոս է, նոյն՝ դրան արձանագրութեան համանուն եպիսկոպոսի հետ:

Դանիէլ վարդապետը 1464 թուին գալիս է Հաւուց թառի վանքը «եւ միաբան եղեւ սր. Ամենափրկչէս եւ այլ սրբութեցս.», «եւ մեծաւ յուսով եւ փափաքմամբ սիրով ձեռն էարկ զար. եւ երկնանման եւ փառաւոր կաթուղիկէ եկեղեցիս: Եւ վերստին կրկին զարդարեաց եւ սալեց եւ նորոգեաց, որ եւ տարածեցաւ համբաւ սորայ ընդ ամ. ծագս տիեզերաց»: Գրիչ Ստեփաննոսը Դանիէլի հասակակիցն է եւ «մի վարպետի աշակերտեալ», ուստի եւ ի սէր նորայանձն է առնում զրել այս տօնականը, թէեւ, ինչպէս տեսանք, սկսել էր իւր համար ողատրաստել. Զահանշահի եւ Գրիգոր կաթուղիկոսի (Մակուեցի) մասին համառօտ տեղեկութիւն տալուց յետոյ՝ աւելցնում է. «Ի թվիս Հայոց Զժդ. ի սր յաթոսս Ամենափրկչիս, ի սր. ուխտս Հայոց թառս գրեցաւ զար. (!) տասս ձեռամբ Ստեփաննոս անարժան արեղայի ի սէր Դանիէլ վրպի.»:

Երրորդ ձեռագիրը Դանիէլ վարդապետի ստացմամբ մի փոքրադիր տեսարան է, գրուած 1471 թուին մազադաթի վերայ, լաւ բոլորգով, աւետարանիչների պատկերներով, սկսուածքների եւ լուսանցքի զարդերով, զլուխ-

ների սկսուածքը թոշնագրերով, իսկ ասել եւ Եսայի քահանայի եւ նորա որ-աներինը ոսկեզիր. ժամանակին եղել է չքեղ, կիլիկեան արուեստի հետեւողու-բեամբ, միջակից բարձր որակով*: Գրիչն է Աղջոց Ս. Մտեփաննոսի, ուրիշ գործերով եւս յայտնի, Վարդան եպիս-կոպոս: Աւետարանի վերջում մեծ յիշա-տակարանը շարադրուած է գեղեցիկ գրաբարով եւ իմաստով՝ ոմն Ովաննէս արեղայի ձեռքով: «Դանիէլ վարդա-պետն Սեվանեցի» այստեղ կոչուած է «երիցս երանեալ», «քաջ հոետոր եւ բանիբուն»: զրիչը՝ Վարդան եպիսկո-պոս՝ «վասն խնդրոյ ճգնազգեաց եւ սրբասնեալ քաջ բարունոյն Դանիէլի», գրում է այս աւետարանը «ի թվարե-րերութես. հայկազնեան տոմարի Զի. ի հայրապետութեն. ար. Արիստակէսի ի յաթոս սր. կջմիածնի: Եւ ի թագաւո-րութեն. վրաց Բագրատին եւ ի զանու-թեն. Հասան յիշին», «ի գաւառս Արա-բարդեան, ի ձորս Քեղոյ ի վանքս Աղջոց ընդ հովանեաւ սր. Մտեփաննոսիս եւ հը-րաշափառ կաթուզիկէիս...»: Ապա խնդրում է յիշել Դանիէլի ծնողներին՝ «Կարապիտ քահանային եւ մարն Հա-մալորին եւ եղբարցն իւրոց Վրթանի-սին, Առևստակիսին եւ Գրիգորէս քա-հանային, եւ տր. Ներսէս Էպլսկպսին եւ ծնողաց եւ եղբարց նորին, եւ Եսաի քահանային եւ որդո նր. Գրիգորէս կու-սակրաւն արեղաբին»: Այստեղ ընդգրծ-ուած անունները նոյնանում են արձա-նագրութեան մէջ յիշուած անձերի հետ. վարդապետի ծնողների անունները կրկ-նուած անսանք եւ վերեւի յիշատակա-րաններում: Ներսէս եպիսկոպոսը ար-գեօք միայն հոգեւո՞ր կապ ունէր Դա-նիէլի հետ, թէ նաեւ ազգակցական, Հաստատ չդիտենք. նոյնը կարող ենք

ասել եւ Եսայի քահանայի եւ նորա որ-դի Գրիգորէս արեղայի մասին, ո՛չ նոյ-նանուն քահանայի, որ Դանիէլի եղբայրն էր եւ «Զ» (=1452) թուին «ի հոռի իլ. մերիտասարդւե տիս» մեռած արդէն*: Այս Գրիգորիս արեղան գրան նկարիչ Արքահամի եղբայրն էր արձանագրու-թեան համեմատ, զուցէ եւ հոգեւոր եղբայրը կամ աշակերտակիցը:

Բարեբաղդաբար նոյն ձեռագրի մէջ յիշատակութիւն ունինք եւ նկարիչ Ար-քահամի կողմից. Մատթէոսի վերջում երկու թերթի վերայ, լաւ բոլորգրով կազմուած զանկը, տարբեր բուն գրչու-թիւից եւ տակը աւելացրած. «Զածա-րան. մեծ բարունին զԴանիէլ, մեկնող բանի, զստացաւզ սր. մատենիս եւ զա-շակերտ եռամեծիս զԱրքահամ անվարժ գրչիկս յիշել յաղօթս ձեր արժանիս, եւ գուք առնէք վարձս բարիս»: Նորանն է եւ հետեւեալ ոտանաւոր յիշատակարա-նը, թէ եւ անունը չի յիշուած.

* Զեռ. Էջմ. №1319 1301. 7թ.:

«Թվ. Զիկ. Զած. արան մեծ բարունի,

ԸզԴանիէլ քաջ եւ արի,

Եւթեարփենի շնորհիւ իլի,

Մեկնէ զբանս համասեռի,

Նստեալ ի սր. Սեւան կղզի,

Առաքինեալ եւ անուանի:

Լոյս ծագելով ամենայնի

ի ժամանակս դառն եւ յետի,

Սայ զարդարէ զեկեղեցի,

Եւս առաւել զեան կղզի (sic)

ի զանազան զարդ պերճալի,

Պենեալ ի տիպս հրճուելի:

Որպս. եւ այս մատեան բանի,

Աւետաբեր տն. Յի.

Ես զա զրել իմոյս ձեռին,

Յետ այրեցման դիւացն աստի.

Յիշման առնէք զաս արժանի,

Ով ով կարդա կամ հանդիպի:

Նայ եւ զգրչակս յետ ամենի

* Զեռ. Երեւանի թանգ. №134)129:

կարքորաց(sic), որ կան յերկրի, Եւ դուք առջիք վարձս բարի Բարեաց տուողէն յամենայնի»:

Այսուղ համառօտ ամփոփուած ենք տեսնում Դանիէլի գործունէութիւնը, որ նկարագրուած էր նախընթաց երկու յիշատակարանի մէջ, նա «մեծ ըարունի» է եւ «մեկնիչ», հաւանօրէն նորա վարդապետական - քարոզչական կամ վարժապետական գործունէութիւնն ակնարկուած. բնակավայրը Սեւանն է. զարդարել է եկեղեցին «ի զանազան զարդ պիրճալի», որով ի միջի այլոց, Հաւուց թառի նորոգութիւնն ու սալելն է ակնարկուած, դուցէ եւ ստացած ձեռադիրները^{**}: Սեւանի զարդերի մէջ պիտի հասկանալ եւ նորա հրամանով շինուած քանդակազարդ այս դուռը: Յիշատակարանի «ետ զսա գրել իմոյս ձեռին» պէտք է հասկանալ Մատթէոսի վերջում աւելցրած ցանկը, իսկ «յետ այրեցման դիւացն աստի» խօսքերը անհասկանալի են մեզ:

Մատթէոսի պատկերի տակ շեղագրով կայ եւ հետեւեալ նկատողութիւնը. «Զարրահամ նկարիչ յիշեա եւ ասա միշտ որ. ողորմեա». արդեօք վերոյիշ-

** Դանիէլ վարդապետի հասակակից եւ դասընկեր լինելու իրողութիւնը Հաւուց թառի վանական Ստեփանոս գրիչի հետ, նորա ուխտագնացութիւնն ու հոգեւոր կապը, այն էլ տարբեր ժամանակներում, այս եւ մերձակայ Աղջոց վանիքի հետ, մտածել է տալիս, թէ, դուցէ, նա ծագմամբ այս շրջանից էր: Այդ դէպքում կարող է իւր յիշատակարանի մէջ յիշուած «բազմերախտ» Յովհաննէս կրօնաւոր»ը նոյնանալ Աղջոց վանիքում գրուած աւետարանի յիշատակարանի «գծող Ռվաննէս սոսկ անուն արեդայ»ի հետ:

Եալ նոյնանուն նկարի^ջն է սա. գրերի տեսակի տարրերութիւնը ապացոյց չէ գեռ եւս անձերի զանազանութեան, այս խնդիրը թողնում ենք առ այժմ բաց:


Ժամանակակից եւ նոյնանուն մի ուրիշ նկարիչ եւ գրիչ ունինք Վայոց Զորի Սպիտակաւոր Աստուածածնի վանականների մէջ. նորա անունը յիշեցինք իւր Զաքարիա եղրօր հետ՝ Սարգիս կաթուղիկոսի հետ կապուած յիշատակարանների մէջ. բայց սա աշակերտ է նոյն վանքի վանահայր Աւագոտէր վարդապետի, եւ 1482, 1484, 1487 եւ 1498 թ.թ. իւր վանքում վերջին թուականին եւ նըրանից քիչ առաջ «հոետոր» եւ «քաջ բարունուպետ» կոչուած ուրիշների կողմից*, մինչգեռ նոյնանուն Սեւաննեցին Դանիէլի աշակերտն է, առանց վարդապետական տիտղոսի եւ 1498 թուին Սեւաննումն էր:

Դ.

Դրան ծագման հետ կապուած թըւականի եւ անունների այսպիսի լուսարանութիւնից յետոյ, կարող ենք անցնել նորա հնագիտական - գեղարվեստական համառօտ վերլուծութեան եւ գնահատման (պատկ. 2):

Ճակատին չորեքկերպեան աթոռի վերայ բազմած է Ամենակալը. աջ կողմից արծիւ եւ առիւծ, ձախից հրեշտակ (մարդ) եւ եղ, ուրեմն, դասաւորութիւնը համապատասխան չէ ոչ աւետարանների նշանակներին եւ ոչ Յայտնութեան (Դ.7), այլ եղեկիէլի տեսլեան (Ա.10): Չորեքկերպեանների մէջքին կազմուած է քառակուսի շրջանակուած տարածութիւն, իսկ նորա ներսը, բոլորակ շրջան, վերան երկարածեւ բարձ-

*Մեր «Խաղբակեանի», եր. 236-238:



Պատկեր 2.- Սեւանի Առաքելոց վանքի
հարաւային դուռը

(մութաքայ), իսկ սորա վերայ բազմած խաչազարդուած, մազերն ուսերի վե-
է Ամենակալը՝ արեւելեան ձեւով, ծա- րայ իջած, աչքերն ուղղած դիտողին:
րապատիկ. մէջքի կողմից էլ նկատուում յօնքերը կամարածեւ շեշտուած, միրու-
է քառանկիւնի թիկնատեղի: Նա աջով քը թեթեւակի սրածայր: Հագել է մին-
խաչակնքում է եւ ձախով աւետարան չեւ ծնկները հասնող բաճկոնակ. կուրծ-
րոնել՝ կրծքին սեղմած: Նիմբուսը բո- քը, փէշերի ծայրերն ու բազուկները
լորակ է, մակերեւոյթը ականակուռ դարդարուն, ականակուռ գոտի կապած.

բաճկոնակի տակից երեւում է ներքնազգեստի քղանցքը՝ մինչեւ ծնկները հասնող: Թիկունքին ձգուած է նուրբ ծիրանի, որի եղերքներն են միայն երեւում ուսերի կողմից: Անդրավարտիկը նեղ է, ոտքերին փափուկ, ճիտկաւոր կօշիկ: Նստուածքը նման արեւելեան իշխանաւորի, համեմատելի մեր Լեռն Դ.ի պատկերին, որ նկարուած է Սարգիս Պիծակի կողմից*, բայց աւելի նման հեռաւոր արեւելքի Բուդղայի նստած արձանի, մանաւանդ ոտքերի դիրքով: Չորեքիերպեանները թւում է թէ թուչում են, իւրաքանչիւր զոյգը իւր ուղղութեամբ, բնագրի ցուցման համաձայն: Հայ արուեստի մէջ այս մոտիւն ունինք այլ եւ այլ եղանակաւորութիւններով, մանրանկարչութիւնից զատ՝ նաև ճարտարապետական քանդակագործութեան եւ ոսկերչութեան մէջ**: Բոլորակի մընացած դաշտը, ինչպէս եւ քառանկիւնները զարդարուած են արմաւենիկի եւ եռատերեւների մոտիւներով եւ ցողունների հիւսուածքով, նոյնը նաև չորեկերպեանների բոնած տարածութեան պատ մասը:

Սրանից ցած՝ Բարեխօսի տեսարանն է, որ խակապէս չորեքիերպեան աթոռի վերայ նստած Ամենակալի հետ ըստ իմաստի մի ամրողութիւն է կազմում. վերջինը յաճախ առանձին եւս իրեւ ամրողութիւն երեւան է զալիս քրիստոնէական արուեստի պատմութեան մէջ: Չորս կամարների տակ շարքով կանգնած են չորս ֆիգուր, մէջտեղի հինգերորդ կամարի տակ մի չէնքի գըմքեթն է իւր խաչով, որ մտու չէ այս խըմքակցութեան: Չափից դէպի աջ Յովհաննէս Մկրտիչն է անապատականի

ցցուած մազերով, երկրորդը Աստուածածինն է, երրորդը Ստեփաննոս նախավկայ սարկաւագ՝ բուրվառը ձեռքին, եւ չորրորդը Գրիգոր՝ Լուսաւորիչ Հայաստանեայց, համաձայն «բարեխօս ունիմք» ժամապաշտական մաղթանքի, ամենքն էլ աղաչաւորի դիրքով, ձեռքերն առաջ մեկնած:

Բարեխօսի խմբաքանդակից ցած՝ Հոգեգալստեան տեսարանն է վերնատան մէջ. վերջինը մի սփերիկ, խաչազարդ գմբեթով չէնք է, սիւների վերայ հաստատուած կամարներով պայմանաւորած եւ ոճաւորած. կեղրոնական գմբեթի կողքերից երեւում են մի մի աւելի փոքր դարձեալ սփերիկ գմբեթներ, որ բիւզանդական աղերս է մատնանշում, նաեւ սիւների օղակաւոր բների ձեւակերպութեամբ, յատկապէս ներքեւի կամարներում, ուր ծունկ չոքած երկու վեղարաւորներն են: Մէջտեղի գմբեթի տակ ցած է սաւառնում աղաւնակերպ Ս. Հոգին, գլխի չուրջը խաչազարդ նիմրուսով*, կտցից դուրս են ցոլում ճառագայթները երեք վինջով երկկարգ եւ երեք երեք նըստած առաքեալների վերայ, աթոռները նկատելի չեն, բոլորն էլ նիմրուսով եւ միբուքաւոր, բացառութեամբ երկուսի, որոնցից մէկը Յովհաննէսն է, կեղրոնական անձերից մէկը՝ նայողի աջ կողմից: Հազեւ են երկար, մինչեւ ոտքերը հասնող պարեղօտ, ոմանք գօտեւորուած եւ ուսերին փիլոնածեւ տողայ ձրգած, կրծքին ճարմանդով:

Առաքեալների խմբից ցած նկատում է երեք կամար սիւների վերայ հաստատուած, միջին երկու սիւներն ու կամարն աւելի բարձր քան կողքերինը, ու

* Ալիշան. Սիսուան. Եր. 481:

** Մեր «Խաղբակեանք» Ա. Եր. 192:

* Այստեղ երկու կողմից նկատում են փակագրով տառեր, որ առայժմ լուծել չենք կարողացել:

բոնց տակ ծունկ են չոքած և ձեռքերը ազօթաւորի ձեւով վեր բարձրացրած երկու վեղարաւորներ. դոցանից աջ կողմինն աւելի ծերէ, միւսը սրածայր մոռոքով եւ աւելի երիտասարդական արտայայտութեամբ, արձանագրութեան Դանիէլ վարդապետը եւ Ներսէս Եպիսկոպոս, որոնք երկար պարեգոտի վերայից փիլոն ունին ձգած, միջնադարեան վանականների հազուստը, որ տեւում է մինչեւ ժի. դարու վերջերը: Միջին կամարի տակ կանգնած են երեք Փիգուր, միջինն աւելի բարձր, արքայական թագով, աջով խաչակնքում է, ձախով աւետարան բռնել, սեղմած կրծքին, բիւզանդական կայսերական զգեստաւորութեամբ, այսինքն հազել է մինչեւ ոլոքները հասնող տունիկայ, փէշերի եզրները եւ պարանոցը զարդարուն, ինչպէս եւ առաջի կողմից մի շերտ վերից վար, փորուրարի նման, կապել է եւ դօտի: Թագի ճակատը եռածիւղ, բացուածքի չուրջը երկու բոլորակ զծերի մէջ թանկագին քարերի շարուածք: Դէմքը լրիւ, բոլորակ, կարճ մորուքով, ոլոքներից զած ոտքերը չեն երեւում: Թագազարդի աջ կողմից կանգնած է մինչեւ ծնկները հասնող բաճկոն հազած մի այլ Փիգուր, մարդկային զլխով դէպի կեղբոնական անձր դարձած, իսկ ծոծրակին էլ կազած է մի կենդանու, թւում է շան, գըրտւխ. ձախ ձեռքը դրիւ է փորի վերայ, իսկ աջը բարձրացրել խօսողի կամ աղաչաւորի շարժումով: Թագազարդ անձի ձախ կողմից կանգնած է մի այլ մարդ, սրածայր զլխարկով, պարսկական կամ աւելի ճիշդ պարթեւական, մինչեւ ծնկները հասնող բաճկոնով, նեղանդրավարտիկով, ոտքերին կօշիկ, ձեռքերը «հաւատամք» բռնած:

Հոգեգալստեան պատկերագրու-


թիւնը Երեւան է դալիս Զ. դարում ասորական Բարուլայի աւետարանի մանրանկարչութեան մէջ, ինչպէս եւ Մօնցայի սրուակների վերայ, բոլոր առաքեալները կանգնած, զլմներին հրեղէն լեզուներով, նրանց մէջ տեղը Աստուածածին. վերեւից ցած է իջնում աղաւնակերպ Ս. Հոգին: Երկրորդ ձեւակերպութեամբ՝ թ-ժԱ. դարում, առաքեալները նստած են, երկու խմբի բաժանուած, երկնքից լուսոյ ճառագայթներն իջնում են առաքեալների զլխին, իսկ նրանց ոտքերից ցած՝ կամարի տակ՝ աշխարհն է կամ աղգերի ներկայացուցութիւնը (Գործք, Բ. 5-12) երկու խմբի բաժանուած կամ առանց բաժանման: Նոյնը նաև էտիմացիայի հետ կապուած, ինչպէս Գրիգոր Աստուածամբնի պատկերագրուած ճառերի մէջ, պատրաստուած թ. դարում Բարսեղ Մակեդոնացու համար (Փարիզ, Ազգ. Մատ. №510): Մեր հարեւան Վրացիների մէջ՝ Գելատի աւետարանում ժի. դարից, ընդօրինակուած բիւզանդական ժԱ. դարու (Փարիզ, Ազգ. Մատ. №74) կամ աւելի հին օրինակներից, առաքեալները նոյնպէս նստած են, զլխներին երկնքից իջնում են լուսոյ ճառագայթներ, իսկ ոտքերի տակ՝ կամարի ներքոյ աղգերի ներկայացուցիչները, դարձեալ երկու խմբի բաժանուած*: Այս ձեւակերպութիւններով Հոգեգալստեան պատկերագրութիւնը կատարելապէս ընդհանրացած է ԺԳ. դարու հայ մանրանկարչութեան մէջ, յաճախ նաև կենդանու զլխով եւ թագազարդ Փիգուրնե-

* Պօբովկիյ. — Նշխարներ քրիստոնէական պատկերագրութեան եւ արևեստի յիշատակարանների. 1900, Եր. 180-196:

րի հետ միասին, որ առանձնայատուկ չէ միայն հայ արուեստին: Աղջերի խըմ-բակցութիւնը պատահում է եւ աւելի պարզ ձեւով՝ երկու կամ երեք ֆիգուր-ներով, ինչպէս մեր դրան պատկերա-դրութեան մէջ: Կենդանու դիմով մարզը շնադլսաց ազգն է կամ հեթանոսութիւ-նը, առասպելական աւանդութեան աղ-դեցութեամբ, իսկ թագազարդ անձով սովորաբար աշխարհն է ներկայացրած

(κο'smos), բայց մեր դրան վերայ, տըւ-եալներից դատելով, նկարիչը պատկե-րաւորում է Քրիստոս իւր աւետարանով աշխարհի ազգերի մէջ:

Պատկերագրական քանդակների տակ երեւում է մի սիրուն եւ մեծ վար-դեակ բոլորակի մէջ, շատ յաճախ կը ըկ-նուած ձարտարապետական եւ մանա-ւանդ խաչքարերի քանդակագործու-թեան մէջ. վարդեակն էլ զետեղուած է



Պատկեր 3.- Սեւանի նկարազարդ դրան
շրջանակը

քառանկիւնու մէջ, զարդարուն անկիւններով եւ հիւսուած եռատերեւի եւ արմաւենիկի ցօղուններով, բոլորն էլ շատ սիրուած ժԴ. զարու մանրանկարչութեան մէջ: Ապա այս բոլորը, այսինքն Բարեխօսի չորս պատկերները, Հոգեգալուսարը իւր բաղկացուցիչ մասերով, շրջապատուած է մի քառանկիւնի, փոքր ինչ դուրս ընկած, տախտակաձեւ շրջանակով, որի չորս կողերի վերայ փորագրուած է արձանագրութիւնը, ձախ անկիւնից սկսուած՝ նախ դէպի վեր եւ ապա միշտ աջ՝ շրջանակի ուղղութեամբ: Իսկ այս բոլորը, նաեւ Ամենակալի պատկերագրութիւնը, եզերուած է մի արտաքին շրջանակով, որի բազմաձեւ հիւսուածքի եւ վարդեակների զարդարանքները փոփոխուում են պատկերագրական մասերի փոփոխման հետ: Բուն դուռն էլ, որ ընկուզի փայտի մի կտոր է, ունէք առանձին շրջանակ, տարրեր փայտից (պատկ. 3), զարդարանքները նըման մեր ժԴ. զարու խաչքարերի կողերի զարդարանքներին, որոնք եւ աղերս են ցուցարերում մահմետական արուեստի հետ, յատկապէս աջ եւ ձախ կողերի աղիւսաձեւերն ու ներքեւի երկրաչափական հիւսուածքները:

Արդեօք ամբողջի յղացումն ու շարագրութիւնը Արբահամի[®] աշխատանքն է, թէ ընդօրինակութիւն մի աւելի հին

գործի: Անկասկած է, որ ամբողջութեան ոճը, յատկապէս արտաքին շրջանակի (պատկ. 3), աւելի հնագոյն ժամանակի ազգեցութիւն է մատնանշում, այսինքն ժԴ. զարի կէսերից յետ՝ դէպի ի ժԴ. զարը, որ ընդհանուր առմամբ իւր գըրուշմն է գրել նաեւ յետագայ զարերի վերայ, բայց Լանկթամուրից յետոյ արգէն կենդանութիւնն ու ազնուութիւնը հետզհետէ կորցրած եւ բարբարոսական տարրերի եւ կոշտութեան ակնյայտնի նշաններով: Այստեղ թէ՛ պատկերագրութիւնը եւ թէ՛ զարդարանքը նուրբ է եւ ազնիւ, որչափ այս խօսքերը կարելի է ժԴ. ժԴ. զարի առաջին կիսի արուեստի մասին գործածել: Եթէ ընդօրինակութիւն չէ, որ չենք կարծում, յատկապէս բուն գրան նկատմամբ, այլ հընագոյն աւանդութիւնների եւ ոճի իւրացմամբ մի նոր շարադրութիւն, ապայ յանձին Արբահամի ունինք ժԵ. զարու ամենալաւ արուեստագէտներից մէկը, ժամանակի սովորական մակերեւոյթից բարձր իւր ընտիր տեխնիկայով եւ շարադրական ունակութեամբ: Այսպիսի ենթագրութեան հիմք է ծառայում մեզ նաեւ խաչքարերի արուեստի մէջ նման երեւոյթների գոյութիւնը:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՈՍ. ՅՈՎԱԿԵՓԵԱՆ
Նոր Նախիջեւան